ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«07» 03 2019 թ. N 03

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» N 1515-Ն որոշումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պետական բյուջեից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» ծրագրերի (այսուհետ՝ «Ծրագրեր») համար նախատեսված միջոցները տրամադրել մրցույթով՝ սույն կարգադրությամբ հաստատված կարգով անցկացված մրցույթը հաղթած կազմակերպությանը:

2. Հաստատել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Ծրագրեր»-ի միջոցների օգտագործման կարգը:

3. Ստեղծել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Ծրագրեր»-ի միջոցների տրամադրման մշտական գործող մրցութային հանձնաժողով:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյան

Հաստատված է
ՀՀ ԳԱԱ նախագահի
2019թ. փետրվարի 07-ի
Թիվ 03 կարգադրությամբ

ԿԱՐԳ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և « ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» ծրագրերի միջոցների օգտագործման

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և « ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում » ծրագրերի (այսուհետ՝ «Ծրագրեր») միջոցների տրամադրման հետ կապված հիմնական հարաբերությունները, պայմանները և գործընթացները:

2. ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպություններին «Ծրագրեր»-ից ֆինանսական հատկացումները կատարվում է մրցույթային կարգով: Մրցույթը հայտարարում և իրագործում է ՀՀ ԳԱԱ մշտական գործող մրցութային հանձնաժողովը: Հանձնաժողովը սույն կարգի պահանջներին համապատասխան կազմակերպում է կազմակերպությունների՝ «Ծրագրերից» ֆինանսական հատկացումներ ստանալու համար ներկայացված հայտերի գնահատման և ընտրության մրցույթ:

3. Հայտում հիմնավորվում է գիտական սարքավորումների սպասարկման, սարքավորումներով վերազինման, գիտափորձերի իրականացման համար նյութերի գնման և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարման համար անհրաժեշտ գումարը, սարքավորումների, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունը, օգտագործման հնարավորությունները և այլն:

4. Հանձնաժողովն իրավունք ունի կազմակերպության կողմից ներկայացված հայտը գնահատելու համար ներգրավել խորհրդատու անձ կամ կազմակերպություն:

5. Անցկացված մրցույթի արդյունքների հիման վրա հաղթած կազմակերպության և ՀՀ ԳԱԱ-ի միջև կնքվում է պայմանագիր՝ «Ծրագրերի» միջոցներից կազմակերպությանը գումար հատկացնելու վերաբերյալ:

6. Կազմակերպությունը «Ծրագրերից» ստացված միջոցներից սարքավորումների, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

7. Մրցութային հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են նիստերի միջոցով՝ կոլեգիալության սկզբունքով: Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել քվեարկության կամ հարցումների ձևով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

8. Հանձնաժողովի քարտուղարը չի մասնակցում քվեարկությանը և իրականացնում է միայն իրեն վերապահված լիազորություններ:

9. Մրցութային հանձնաժողովի առաջին նիստում՝
- հաստատվում է հանձնաժողովի առաջին նիստի օրակարգը,
- հաստատվում է մրցույթի մասին հայտարարության տեքստը,

- հաստատվում է մրցույթին ներկայացվող փաստաթղթերի փաթեթը:

10. Հանձնաժողովի առաջին նիստի հաջորդ օրը հանձնաժողովի կողմից հաստատված մրցույթի մասին հայտարարությունը սահմանված կարգով տեղադրվում է ակադեմիայի կայքում:

11. Կազմակերպությունը մրցույթին մասնակցելու հայտը ներկայացնում է իր բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարին: Բաժանմունքը գնահատում է հայտը, ուսումնասիրում կազմակերպության գործունեության համար ձեռք բերվող ապրանքների, սարքավորումների, աշխատանքների և ծառայությունների անհրաժեշտությունը, դրանց արդյունավետությունը, շահագործման հնարավորությունները և այլն:

Կազմակերպության կողմից մրցույթին ներկայացված հայտի վերաբերյալ բաժանմունքի կարծիքը հայտի հետ հանձնվում է մրցութային հանձնաժողովին, որի նախագահը ՀՀ ԳԱԱ նախագահի համաձայնությամբ կազմակերպում է մրցույթ:

Մրցույթն անցկացվում է բաց քվեարկությամբ, հաղթողը որոշվում է ձայների պարզ մեծամասնությամբ:

12. Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած կազմակերպությունը հայտի մերժման դեպքում իրավունք ունի բողոքարկել ակադեմիայի նախագահին:

13. Մրցութային հանձնաժողովի նախագահը մրցույթի արդյունքների մասին որոշումը ներկայացնում է ակադեմիայի նախագահի հաստատմանը:

14. Ակադեմիայի նախագահը հաստատում կամ մերժում է հանձնաժողովի որոշումը:

15. Ակադեմիայի նախագահի կողմից հաստատված մրցութային հանձնաժողովի որոշումը և մրցույթին ներկայացված փաստաթղթերի փաթեթը հանձնվում է ակադեմիայի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ կազմակերպության հետ պայմանագիր կնքելու գործընթացը սկսելու համար:

16. Մրցույթում հաղթած կազմակերպությանը գումարը տրվում է միայն սույն կարգի 6-րդ կետի համաձայն իրականացված գնման մրցույթի արդյունքում նրա կողմից ընտրված մասնակցի /մատակարարի/ առաջարկած գնի չափով, բայց հայտի գնից ոչ ավելի: Այդ մասին առանձին նշվում է «Ծրագրերի» միջոցներից կազմակերպությանը գումար հատկացնելու վերաբերյալ կնքվող պայմանագրում:

17. Գնման մրցույթից հետո կազմակերպությունն ակադեմիային հայտնում է հայտով նախատեսված սարքավորումների, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար մրցույթի արդյունքում ընտրված մասնակցի /մատակարարի/ առաջարկած գնի չափի մասին տեղեկատվություն՝ պայմանագրով հասանելիք գումարը տրամադրելու համար: